ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ ԺԵ. ԴԱՐԻ ԿԷՍԵՐԻՆ

ԱՂԱՒՆԻ Ա. ՈՒԹՈՒՋԵԱՆ

Կիլիկեան Հայկական պետականութեան կորստից յետոյ (1375), հայոց եկեղեցին անմիջապէս փորձում է զբաղեցնել հանգած պետականութեան դատարկ մնացած տեղը։ Պետականութեան վերականգնման գաղափարը հետզհետէ դառնում է հայոց եկեղեցու իւրայատուկ գաղափարաբանութիւնը։

Եթէ ուշադրութեամբ քննենք ԺԳ.-ԺԵ. եւ աւելի ուշ դարերի հայկական ձեռագրաց յիշատակարաններն ու մանր ժամանակագրութիւնները, ապա յստակօրէն կը տեսնենք թէ ինչպիսի՛ հետեւողականութեամբ է արծարծւում պետականութեան վերականգնման գաղափարը եւ թէ պետականութեան բացակայութիւնը ինչպիսի՛ ողբալի կացութիւն է ստեղծել բովանդակ հայութեան համար։ Ժամանակակիցներից մէկը խիստ դիպուկ է նկատել, թէ հայոց ազգը մնացել է անտէր, որ Հայկազուն տոհմի այլին այլեւս խաղող չի տալիս, որ այն վաղուց վերածուել է խոպանի ու այնտեղ փուշ է բուսնում, քանզի որբ է մնացել «ի հօրէ եւ ի մօրէ, այսինքն՝ ի թագաւորէ եւ ի հայրապետէ»[1]։

Հայաստանի քաղաքական եւ եկեղեցական իշխանութիւնները վերականգնելու մտայնութիւնն իր ցայտուն արտայայտութիւնն է գտնում մանաւանդ Վասպուրականում եւ Տարօնում։ Թերթելով Վասպուրականի հոգեւորականների ձեռքով գրուած յիշատակարանները, ստանում ենք այն տպաւորութիւնը, որ դրանցում հայ թագաւորական իշխանութեան գաղափարը նոյնանում է կաթողիկոսական իշխանութեան հետ։ 1401ին Հիզանում գրուած մի յիշատակարանում կարդում ենք. «... զոր տէր Աստուածն Իսրայէլի պահէ անխախտ, որ չսասանի՝ զաթոռ մերոյս հայրապետի եւ զմեր ազին թագաւորի... »[2]։ Անշուշտ, յիշատակագրի համար նոյնացւում են հայոց հոգեւոր տիրոջ՝ կաթողիկոսի եւ հայոց թագաւորի անձնաւորութիւնները՝ բազմած նոյն աթոռին։ Սա եզակի փաստ չէ։ Մտացածին հայոց թագաւորի գաղափարը կրկնւում է նաեւ այլ յիշատակարաններում։ Այսպէս, 1431ին գրուած մի յիշատակարանում կարդում ենք. «զոր տէր աստուած Իսրայէլի պահեսցէ անսասան զաթոռ հայրապետական եւ զթագաւորական մերոյ ազին

եւ բարձրացուցէ զեղջիւր Սիոնի ի մէջ Հայաստանեայց...»[3]։ 1458ին մի յիշատակագրող մաղթում է. «Տէր Աստուած... պահեսցէ անսասան զաթոռ հայրապետութեան եւ թագաւորական քրիստոսայդաւան»[4]։ Բազմաթիւ են այն յիշատակարանները, որոնց հեղինակները դիմելով Բարձրեալին խնդրում էին վերանորոգել «խափանեալ թագաւորութիւնն հայոց ազգի» եւ յոյս էին յայտնում թէ որեւիցէ մի պահ Աստուած վերստին կը նորոգէ «զթագաւորութիւն տառապեալ ազգիս հայոց»[5]։

Ինչպէս տեսնում ենք, Հայաստանի քաղաքական իշխանութեան վերականգնման գաղափարը մոռացութեան մատնուած չէր։ Եկեղեցական միջավայրում փայփայւում էր այն յոյսը, թէ աստուածային բարեխօսութեամբ եւ կամ որեւէ հզօր տիրակալի միջամտութեամբ ի վերջոյ այն կը կատարուի։ Եւ պատահական չէ, որ հենց այս ժամանակ է, որ դարձեալ շրջանառութեան մէջ է դրւում ազատագրական վաղեմի լեգենդը։

Ասել՝ թէ հայկական պետականութեան վերականգնման գաղափարի կրողը միմիայն եկեղեցին էր, ճիշդ չի լինի։ Պէտք է յիշել, որ հենց այս նոյն շրջանում է, որ տկարացած հայ աշխարհիկ աւատատիրութիւնը վերազգեստաւորուեց եւ, ինչպէս դիպուկ նկատում է Աշոտ Գ. Յովհաննիսեանը, «ասպետական զրահն ու սուրը փոխեցին եկեղեցական փիլոնի եւ բուրվառի հետ եւ ծուարեցին իրենց եկեղեցական ազգակիցների փէշերի տակ»[6]։ Այսպէս վարուեցին Արծրունիները, Օրբելեանները, Պռոշեանները, Հասան-Ջալալեանները եւ էլի ուրիշ շատ տոհմեր։ Նման ճանապարհներով ու միջոցներով է, որ հայ ազնուականութիւնը փորձում էր ապահովագրել իր ինքնապահութեան նիւթական աղբիւրները։ Եւ ահա վերազգեստաւորուած ու եկեղեցական սքեմ հագած ազնուականութեան միջավայրում էր, որ առաւել վառ էր արտայայտւում պետականութեան վերականգնման գաղափարը։ Սրա ցայտուն ու վառ օրինակն է ԺԵ. դարի կէսերին Աղթամարում կատարուած փորձը։

Նշանակալից, սակայն հայ պատմագիտութեան մէջ արժանի ուշադրութեան չարժանացած այս փորձի քննական վերլուծութեանն է նուիրուած սոյն ուսումնասիրութիւնը։

Հենց սկզբից նշենք, որ այս իրադարձութեան գլխաւոր դերակատարներն են եղել Աղթամարի Զաքարիա Գ. կաթողիկոսը (1434-1464) եւ նրա հովանաւորող կարա-կոյունլու թուրքմէն տիրակալ Ջհանշահը (1437-1467)։ Զաքարիա կաթողիկոսը ժամանակի աչքի ընկնող եկեղեցական գործիչներից էր, իշխանատենչ ու անկասկած մտաւոր մեծ կարողութիւններով օժտուած մի անհատ։ Ժամանակակիցը «աքանչելի մեծ իմաստասէր, քաջ եւ արի» է ան-

ւանում նրան, որն իբրեւ «պատուական հայրապետ, ուղղափառ, անբիծ ախոյեան եւ յաղթող, սրբասէր, աղքատասէր եւ ողորմած, եզակի էր բովանդակ Հայոց աշխարհում»[7]։ Այս ջատագովական ներբողում մենք չենք ցանկանում տեսնել սոսկ սովորական դարձած, պատեհ եւ անպատեհ առիթներով յորջորջուող ինչ-որ բանաձեւ։ Այս դէպքում, «աքանչելի»ն, «իմաստասէր»ն, ու «արի»ն համապատասխանում էին իրականութեանը։ Զաքարիա կաթողիկոսն այն եզակի հայ գործիչներից էր, որին ոչ միայն խորապէս յարգում էին ու գնահատում մահմետական տիրակալները, այլեւ հաւի էին նստում նրա հետ։ Նա սոսկ եկեղեցական չէր, այլեւ հմուտ դիւանագէտ էր ու զինուորական։ Դեռեւս 1458ին, երբ Վանի կառավարող Ղլիճ Ասլանը աւերում ու ոչնչացնում էր երկրամասը՝ նա անձամբ գնաց Խոյ, ներկայացաւ Ջհանշահին եւ համոզեց վերջինիս՝ արշաւելու աւարառուի վրայ, որը եւ տեղի ունեցաւ։ Դա երկրամասը փրկեց յետագայ աւերմունքներից, իսկ Զաքարիայի հեղինակութիւնը խիստ բարձրացաւ։ 1459ին, երբ ռուշկանցի քըրդերը Սէյիդ Ալու գլխաւորութեամբ արշաւեցին դէպի Վանայ լճի ափերը եւ փորձեցին գրաւել Աղթամարը՝ Զաքարիա կաթողիկոսն իր տրամադրութեան ներքոյ գտնուող հայկական զօրամասերով հակահարուած տուեց քրդերին, գրաւեց նրանց լաստանաւերը եւ դուրս քշեց նրանց Վանայ լճի առափնեայ շրջաններից։ Իսկ 1460ին, երբ Ջհանշահը դէպի Խորասան կատարած մեծ ու յաղթական արշաւանքից յետոյ վերադառնում էր Դաւրէժ, հեռատես ու դիւանագէտ Զաքարիան յաղթողին ընդառաջ գնաց շնորհաւորելու, «բազում ընծայիւք, զոր յոյժ սիրով ընկալաւ արքայն արքայից Ջհանշահ փաթշահն եւ դշխոյն Բէկում Խաթուն եւ պատուեալ մեծարեցին զնա»[8]։ Այս բոլորից յետոյ միայն հասկանալի է դառնում, թէ ինչու էր Ջհանշահը հովանաւորում Աղթամարի հովուապետին։ Ինքը՝ Զաքարիան աւելի մեծ ակնկալիքներ ունէր Թուրքմէն տիրակալից։ Նա վաղուց եւեթ տենչում էր վերջինիս օգնութեամբ գրաւել հայոց ընդհանրական կաթողիկոսի գահը։ Տեղին է նշել, որ արեւելեան վարդապետերը եւ մասնաւորապէս՝ Թովմա Մեծոփեցին, ժամանակին (1439-1440), երբ բարձրացուեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու հարցը, մեծ ջանքեր թափեցին Զաքարիա կաթողիկոսին իրենց կողմը գրաւելու համար։ Հենց ինքը՝ Թովմա Մեծոփեցին էր, որ բանակցում էր Զաքարիայի հետ եւ, ինչպէս գրում է Մաղաքիա արք. Օրմանեանը, «յաջողեցաւ Զաքարիան ալ իր կողմը շահիլ, եւ Սիւնեցի ու Վասպուրականցի վարդապետերուն գործակից ընել Աղթամարցիներն ալ, անշուշտ Զաքարիայի աչքին ցոլացնելով,

Աղթամարէ Էջմիածին անցնելու հնարաւորութիւնը»[9]։ Հետեւաբար, Զաքարիայի ակնկալութիւններն ունէին նախահիմք։ Սակայն, 1441ին Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովի նախապատրաստական փուլում եւ հենց ժողովի ժամանակ Զաքարիա կաթողիկոսի թեկնածութիւնը մերժուեց։ Այս հարցում յատկապէս անհաշտ դիրք գրաւեցին Արարատեան եւ Սիւնեաց եպիսկոպոսները, մասնաւորապէս Տաթեւի համալսարանի աշակերտութիւնը, որը չէր ցանկանում, «այդչափ բարձրացած տեսնել Աղթամարի բաժանեալ աթոռը, որ մինչեւ իսկ իր վրան ալ իշխէ»[10]։ Հենց սրանով պէտք է բացատրել Զաքարիայի բացակայութիւնը ժողովում, թէեւ իրեն ենթակայ ութ վարդապետեր՝ Աւետիս վարդապետ Սուրբխաչեցու գլխաւորութեամբ, յատուկ թղթով յայտարարեցին, թէ միաբանում են Վաղարշապատի ժողովին։ Անշուշտ, նրանք նման պատասխանատու յայտարարութիւն կարող էին անել միայն Զաքարիա կաթողիկոսի գիտութեամբ ու յանձնարարութեամբ։ Ահա թէ ինչու նա թէեւ վիրաւորուեց, սակայն չընդդիմացաւ Կիրակոս Վիրապեցու կաթողիկոս ընտրութեանը, մանաւանդ՝ վերջինս Աղթամարի հին միաբաններից էր եւ բարեացակամ դիրքորոշում ունէր իր աթոռի նկատմամբ։ Սակայն Սիւնեաց խմբաւորման ջանքերով, Կիրակոս Վիրապեցու անակնկալ արտաքսուելուց յետոյ (1443), Զաքարիան դարձեալ սկսեց կաթողիկոսական ընդհանրական գահ բարձրանալու յոյսեր փայփայել։ Եւ այժմ, երբ նա վայելում էր Զհանշահի անվերապահ վստահութիւնը, յարմար պահ էր իրականութիւն դարձնելու իր հին երազանքը։ Բոլոր դէպքերում վերոնշեալ 1460ի տեսակցութիւնից յետոյ է, որ երբ «արքայն արքայից Զահանշահ փաթշահն եւ Դշխոյն Բէկում խաթունն», յուժ սիրով ընդունեցին նրան, Զաքարիան վերջապէս յանդգնեց իր համար խնդրել Ս. Էջմիածինի աթոռը[11]։ Զհանշահը, որ խիստ դժգոհ էր Գրիգոր Ժ. Մակուեցի Զալալբեկեանց կաթողիկոսից՝ (երեւի հարկերի վճարման յապաղման համար), կարգադրեց Զաքարիային հուշակել Ամենայն Հայոց կաթողիկոս։ Ժամանակակիցն այսպէս է նկարագրում այս յուժ յիշարժան իրադարձութիւնը. «Զհանշահ Փատշահն եւ դշխոյն Բէկում Խաթունն... ետուն նմա խլայ (պատուոյ զգեստ – Ա. Ու.) եւ պարգեւ զԱջ սուրբ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի. եւ զպատիւ պատրիարգութեան։ Որոյ առաջնորդութեամբն Աստուծոյ եւ կամաւ սուրբ Լուսաւորչին եւ հրամանաւ փատշահին, եկեալ յաստուածարեալ եւ յաստուածանկար սուրբ Գրիգորաշէն եւ երկնահանգէտ կաթողիկէ սուրբ Էջմիածինն, յառաքելաշնորհ աթոռ սրբոյն Գրիգորի, եւ նստաւ ինքնակալ պատրիարգ ընդհանուր ամենայն

քրիստոնէական ազգի, որք են ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, եւ արարեալ զաշխարհ ամենայն լինիլ մի հօտ եւ մի հովիւ»[12]։ Այսպիսով, օգտուելով Ջհանշահի բարեհաճութիւնից՝ նրա աջակցութեամբ 1460ի աշնանը Զաքարիան հռչակուեց Ամենայն Հայոց կաթողիկոս։ Դէպքերին ականատես Թովմա Մեծոփեցին ստիպուած է խոստովանել, որ շահը հաւանելով Զաքարիային, նրան տուեց «զԱՋն Լուսաւորչին մերոյ Ս. Գրիգորի եւ զպատիւ պատրիարքութեան ամենայն Հայոց»[13]։ Իսկ յիշատակագիր Ստեփանոս Արծկեցի աբեղան ուղղակի չեշտում է, թէ Զաքարիան, «յայսմ ամի տիրեաց Էջմիածնին եւ Լուսաւորչի սուրբ Աջոյն»[14] (ընդգծումը մերն է – Ա. Ու.)։ Այսինքն՝ շեշտուել է այն իրողութիւնը, որ Զաքարիան ոչ թէ ընտրուել է, այլ օտար բռնակալի հաճութեամբ է տիրել կաթողիկոսական գահին։ Մինչդեռ մէկ այլ վասպուրականցի յիշատակագիր ցնծութեամբ արձանագրելով այս ակտը, փորձում է իր ժամանակակիցներին համոզել, թէ դա տեղի ունեցաւ աստուածային միջամտութեան շնորհիւ. «Զաքարիան աստուածատուր զօրութեամբ տիրեաց երկու աթոռացն՝ Էջմիածնի եւ Աղթամարայ»[15]։ Թէ որքան համոզիչ է հնչում աստուածային միջամտութեան հանգամանքը՝ դժուար է ասել։ Սակայն այն փաստը, որ Զաքարիան Էջմիածնի գահ է բարձրացել «հրամանաւ փատիշահին» չեն կարողանում թաքցնել անգամ համակիր ժամանակակիցները։ Որքան էլ Զաքարիան առաջնորդւում էր նեղ, անձնական ու խմբակային դրդապատճառներով, պէտք է շեշտել զոյգ աթոռների միաւորման դրական նշանակութիւնը պետականութիւնից զրկուած հայ ժողովրդի կեանքում։ Դառնալով ընդհանրական կաթողիկոս՝ Զաքարիան սկսում է միջամտել նաեւ երկրի քաղաքական կեանքին, կատարել կենտրոնական աշխարհիկ իշխանութեան խիստ պատասխանատու յանձնարարութիւնները։ Դրանցից մէկի խիստ յաջող ընթացքը վկայում է նրա վճռականութեան ու քաղաքական անկուն կեցուածքի մասին։ Որպէս շահի վստահուած անձ ու քաղաքական բանագնաց, 1461ի կէսերին նորընծայ կաթողիկոսը հաշտութեան բանակցութիւններ էր վարում Բաղէշի ապստամբ էմիր Շարաֆի հետ։ Սա հրաժարուել էր հարկեր վճարել կենտրոնական իշխանութեանը եւ սկսել էր կողոպտել շրջակայքի հայկական բնակավայրերը։ Զայրացած շահը, «բարկութեամբ առաքեաց Դ(4) զաւրագլուխս երկոտասան հազար հեծելազօրօք ի վրայ քաղաքին Խըլաթա եւ գնացեալ՝ աւերեալ քանդեցին զնա եւ բազում աւար ի մի ժողովեալ՝ նստան ի վրայ բերդին»[16]։ Անշուշտ, այս ամէնից առաւել տուժում էր խաղաղ հայ բնակչութիւնը, որին նորանոր աղէտներից, արիւնահեղութիւնից ու կոտորածներից ազատելու

նպատակով էր, որ Զաքարիա կաթողիկոսը ստանձնել էր ակամայ դիւանագէտի այս խիստ վտանգաւոր առաքելութիւնը։ Զաքարիա կաթողիկոսի միջամտութեան շնորհիւ կողմերը հաշտուեցին եւ Բաղէշի տիրակալը շարունակեց վճարել սահմանուած հարկերը եւ, որ ամենակարեւորն է, «արար խաղաղութիւն ի մէջ նոցա (այսինքն՝ էմիրի եւ շահի – Ա. Ու.), ազատեաց զամենայն խառնիճաղանճ ժողովուրդն զՀայ եւ զՏաճիկ ի ձեռաց անօրինաց եւ ի դառն գերութենէ»[17]։ Շուրջ երկու ամիս տեւեցին այս բանակցութիւնները, իսկ 1461ի Յունիսին Զաքարիան վերադարձաւ Էջմիածին եւ ձեռնամուխ եղաւ Մայր Աթոռի տնտեսական վիճակի բարելաւման աշխատանքներին։ Մասնաւորապէս յայտնի է, որ նա վճարել է Աթոռի բազում հարկերը. «հատոյց զպարտս բոլորովին»[18]։ Սակայն ընդդիմադիր ուժերը եւ յատկապէս Գրիգոր Ժ. Զալալբեկեանց կաթողիկոսն ու իր համակիրները չէին կարող հանդուրժել Զաքարիայի կաթողիկոսութիւնը, քանզի նախորդն էր «հայրապետութեան օրինաւոր աթոռակալ ճանաչուած անձը։ Ոչ մի ժողով եւ ոչ մի օրինական վճիռ չէր որոշած անոր դադարումը, եւ ոչ ալ ինքն կամովին հրաժարած էր պաշտօնէն»[19]։ Ահա թէ ինչու, երբ Զաքարիայի հովանաւորող Ջհանշահը՝ Հայաստանի եւ յարակից շրջանների կառավարումը յանձնելով իր Հասան Ալի որդուն, հեռացաւ Արեւելք, թագաժառանգը «ենդութեամբ չարախօսաց ոմանց»[20], սկսեց հալածել նորընծայ կաթողիկոսին եւ պահանջեց վիթխարի հարկեր վճարել։ Ստեղծուած իրադրութեան պայմաններում Զաքարիան բարւոք համարեց վերադառնալ Աղթամար։ 1461ի Նոյեմբերին նա ծպտուած ու ծածուկ հեռացաւ Էջմիածնից՝ իր հետ վերցնելով ընդհանրական կաթողիկոսի խորհրդանշան համարուող «զԱջն սուրբ Լուսաւորչին հանդերձ այլ սպասիւք»[21] եւ Աղթամար հասաւ Դեկտեմբերի 11ին։ Զաքարիան շատ չվշտացաւ պարագաների այս փոփոխմամբ, քանզի նա, եւ ժամանակակից յիշատակագիրները նոյնպէս, շարունակում էին իրեն յորջորջել որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս[22], մանաւանդ որ ձեռքին ունէր այդ տիտղոսի առարկայական ապացոյցը՝ Սուրբ Աջը։ Ահա թէ ինչու նա շարունակում է նոյն գործուն մասնակցութիւնը ցուցաբերել երկրի ու ժողովրդի հասարակական-քաղաքական կեանքում։ Դեռ աւելին, նա հետամուտ էր եկեղեցական վերամիաւորման ճանապարհով աթոռանիստ հռչակել Աղթամարը։ Չէ՞ որ այստեղ էին գտնուում հայրապետական սուրբ նշանները, որոնք իրաւունք էին տալիս գերադաս լինել միւս բոլոր աթոռների նկատմամբ։ Բացի այդ, Զաքարիայի համար Աղթամարը առաջին աթոռանիստ հռչակելը ինքնանպատակ չէր։ Եկեղեցական միու-

թեան միջոցով նա երազում էր նաեւ ժողովրդի քաղաքական միութեան մասին։ Զաքարիան փորձում էր ժամանակակիցների մէջ ներշնչել այն պատրանքը, թէ Վասպուրականը ոչ միայն հայոց հոգեւոր, այլեւ քաղաքական իղձերի իրագործման կենտրոնն է։ Քանզի միմիայն այստեղ էին պահպանուել հայոց հինաւուրց թագաւորների շառաւիղները՝ յանձինս իր տոհմակիցների։ Սա սոսկ սնափառութիւն չէր. նման մտայնութիւնն ունէր պատմական որոշակի հենք։ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկումից յետոյ այս տան ներկայացուցիչները սեփականացրեցին Աղթամարի կաթողիկոսութիւնը, որը ԺԳ. դարի 20ականներին որպէս օժիտ անցել էր Հայոց Սեֆեդին իշխանին[23]։ Սա ոչ միայն հիմք դրեց Արծրունեաց-Սեֆեդինեան իշխանական ընտանիքին, այլեւ դարձաւ Աղթամարի կաթողիկոսական հարստութեան նախահայրը։ Պատահական չէ, որ ինքը՝ Զաքարիա կաթողիկոսն իրեն համարում էր «յազգէն Գագկայ թագաւորին»[24]։ Ժամանակակիցներից շատերը եւս համոզուած էին, որ նա «էր յարմատոյ եւ ի ցեղէն մեծ թագաւորին Գագկայ»[25]։ Իսկ մէկ ուրիշն էլ հաւաստում է. «էր թագաւորազն ի թոռնաց և շառաւիղէ արքային Գագկայ»[26]։ Եւ ահա Զաքարիան փորձում է իրականութիւն դարձնել շատ աւելի կարեւոր մի երազանք, քան ընդհանրական կաթողիկոսական գահն ստանալն էր։ 1463-1464ին նա բանակցութիւններ էր վարում Ջհանշահի հետ՝ Վասպուրականի հայկական թագաւորութիւնը վերականգնելու հարցի շուրջ։ Ցաւօք, մեզ յայտնի չեն այդ բանակցութիւնների մանրամասները եւ առայժմ ստիպուած ենք բաւարարուել լոկ միայն կռահումներով։ Առաջնային ու կարեւոր էր նաեւ գահի յաւակնորդի հարցը։ Առարկայօրէն ու՞մ նկատի ունէր Զաքարիան որպէս հայոց գահի հնարաւոր թեկնածու՝ երբ արծարծում էր այսքան յուժ կարեւոր մի խնդիր։ Աներկբայօրէն թեկնածուն պէտք է լինէր մերձաւոր ազգականներից որեւէ մէկը, ոչ միայն, «ի թագաւորաց զարմէ», այլեւ օժտուած ու յարգանքի արժանի մէկը։ Ցիշատակարանների սուղ տուեալներից հնարաւոր է մօտաւոր ճշդութեամբ պարզել Զաքարիայի տոհմածառը, որը եւ արել է Հ. Ներսէս Ակինեանը[27]։ Պարզւում է, որ մեզ հետաքրքրող պահին ապրում եւ գործում էին կաթողիկոսի եղբօր՝ Գուրջիբեկի երեք որդիները։ Նրանցից երկուսը՝ Ներսէսն ու Ստեփանոսը բարձրաստիճան հոգեւորականներ էին, հետեւաբար յաւակնորդ լինել չէին կարող։ Երրորդը «պարոն» Սմբատն էր, արդէն ամուսնացած (կնոջն անուանում էին Բեկի Խաթուն) ու զոյգ երեխաների հայր մի անձնաւորութիւն։ Սմբատ Սեֆեդինեանի մասին կենսագրական արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում 1465ին

գրուած «ճառընտիր», ժողովածուի զոյգ յիշատակարանները։ Թումա գրիչը խնդրում է յիշել գրքի պատուիրատուներին եւ «մանաւանդ ստացող սուրբ գրոյս զպարոն Սմբատն, եւ զծնողն իւր զամիր Գուռջիբէկն եւ զԴունիա-Խաթունն, եւ զհաւրեղբայրն զտէր Զաքարիա կաթողիկոսն, զկենակիցն Սմբատայ զԲեկի-Խաթունն, եւ զնախնիքն ամենայնի...»։ Եւ երկրորդ յիշատակարանը՝ «Ողորմած Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ամենայն հաւատացեալ քրիստոնէից, եւս առաւել ստացողի սուրբ գրոցս Սմբատ Թագաւորին, եւ ծնաւղաց նորին՝ պարոն Գուռջիբէկին եւ Դունեա-Խաթունին, եւ հաւրեղբաւրն տէր Զաքարիա կաթողիկոսին եւ կենակցին Բեկի-Խաթունին, եւ քուերն Խանում-Խաթունին, եւ նախնեաց ամենայնի»[28]։ Յաւօք, նրա մասին այլ տուեալներ մեզ յայտնի չեն[29]։ Զգիտենք ո՛չ տարիքը, ո՛չ զբաղմունքը եւ ո՛չ էլ այլ մանրամասներ, թէեւ կարող ենք ինչ-ինչ բաներ կռահել։ Ահա նրա թեկնածութիւնն է, որ կաթողիկոսը ներկայացրեց շահին։

Սակայն, Զաքարիային վիճակուած չէր տեսնել իր փայփայած երազանքի իրականութիւն դառնալը։ Մեզ անյայտ է, թէ ինչ հանգամանքների բերումով նա դարձեալ վերադարձել էր Էջմիածին (իհարկէ, առանց Սրբ. Աջի), որտեղ էլ 1464ին, ինչպէս տրտմութեամբ արձանագրում է ժամանակագիրը, «նենգ եւ չարախօս անձինք» նրան թունաւորելով սպաննեցին[30]։ Սակայն կաթողիկոսի անակնկալ մահը չխանգարեց նրա մեծ ծրագրի իրականացմանը։

Նորընտիր կաթողիկոս Ստեփանոս Գ. Տղան (1464-1489), որն, ի դէպ, Զաքարիայի եղբօրորդին էր եւ գահի յաւակնորդի հարազատ եղբայրը, ոչ միայն քաջատեղեակ էր հանգուցեալ հայրապետի ծրագրերին, այլեւ նրա անմիջական աջակիցն էր ու խորհրդականը։ Կաթողիկոս օծուելուց անմիջապէս յետոյ, Ստեփանոս Դ.ն շտապեց իրականութիւն դարձնել Զհանշահից արդէն ձեռք բերած համաձայնութիւնը եւ 1465ի սկզբներին Աղթամարի Սրբ. Խաչ Մայր եկեղեցում մեծ հանդիսաւորութեամբ եղբօրն օծեց հայոց թագաւոր. «Եւ յայնժամ,- ցնծութեամբ գրում է ժամանակագիրը,- օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր։ Փրկիչն մեր Քրիստոս զօրացուսցէ զնա եւ բարձրացուսցէ զաթոռ իշխանութեան մերոյ»[31]։ Սմբատի օծման հետ աղերսուած որոշ մանրամասներ է մեզ հաղորդում Մաշտոցեան Մատենադարանում պահւող թիւ 5702 ձեռագիրը, որը «եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ թագաւորի օծման Մաշտոց» է՝ գրուած Աղթամարում Ստեփանոս կաթողիկոսի եղբայր, Ներսէս եպիսկոպոս գրչի կողմից 1471ին, այսինքն՝ դէպքերից ընդամէնը վեց տարի անց։

Ձեռագրի 212բ էջում պատկերուած է թագաւորի օծման արարողութիւնը։ Կենտրոնում Ստեփանոս կաթողիկոսի եւ Սմբատ թագաւորի պատկերներն են։ Կաթողիկոսը թագադրում է Սմբատին, որը չոգել է եւ գլուխը թեթեւ խոնարհել։ Թագաւորից աջ պատկերուած են երեք սրբեր, իսկ ձախից՝ կաթողիկոսին ընկերակցող մի խումբ հոգեւորականներ։ Եթէ վստահենք ձեռագրի նկարիչ Կարապետ ծաղկողի դիտողականութեանը եւ մի պահ ենթադրենք, որ նա հարազատօրէն է վերարտադրել թագաւորի պատկերը, ապա կարող ենք ընդհանուր գծերով ներկայացնել Սմբատ թագաւորին։ Սա ոչ շատ երիտասարդ, գեղեցկատեսիլ մէկն է, որ կրում է թանկարժէք քարերով զարդարուած հագուստ եւ աղամանդակուռ թագ։

Արծրունի-Սեֆեդինեան Տոհմածառը ԺԵ.-ԺԶ. դարերում
(համաձայն Հ. Ներսէս Ակինեանի[32])

Մելիք Ստեփան
(կինը՝ Խաթուն-Մելիք)

- Զաքարիա Գ. կաթողիկոս (1434-1464)
- Ամիր Գուրջիբեկ (կիները՝ Դունիա Խաթուն եւ յետոյ՝ Իմնա Խաթուն)
  - Սմբատ թագաւոր (1465-1471) (կինը՝ Բեկի Խաթուն)
    - Իսկենդէր (կինը՝ Շահրում Խաթուն)
      - Գրիգորիս Ա. Աղթամարցի կաթողիկոս (1512-1544)
      - Ամիր Գուրջիբեկ (մահացած 1533)
      - Սմբատ
    - Զաքարիա Դ. կաթողիկոս (1489-1496)
  - Ներսէս արք.
  - Ստեփանոս Գ. Տղայ կաթողիկոս (1464-1489)

Այսպիսով, 1465ին Աղթամարում տեղի ունեցաւ յուժ կարեւոր մի քաղաքական ակտ։ Անշուշտ, մենք հեռու ենք այն մտքից, թէ հենց այս ակտով, հենց այս ժամանակ վերականգնուեց հայկական պետականութիւնը։ Իրենք՝ ժամանակակիցներն էլ էին հասկանում, որ սա լոկ փորձ էր, արտայայտութիւն։ ԺԵ. դարում, «թագաւորական տուն» եւ «թագաւոր» հասկացութիւններն այլեւս չեն ունեցել

այն նշանակութիւնը, ինչ առաջներում՝ ասենք Արծրունեաց ու Բագրատունեաց պատմաշրջաններում (Ժ.-ԺԱ. դդ.)։ Ինչպէս ճիշդ նկատուել է, այդ ձեւական անուանում էր սոսկ, որ պահպանում էր շահագրգիռ խաւերի եւ ժողովրդի մէջ հայերի անկախութեան երազանքներին բաւարարութիւն տալու համար[33]։ Զէ՞ որ շատ վաղուց Աղթամարի կաթողիկոսական աթոռը համարւում էր նաեւ «թագաւորական աթոռ»[34]։ Սմբատի արքայ անուանումը աւելի հոգեբանական, ազգային ինքնագիտակցութեան նշանակութիւն ունէր, քան պետական որեւէ իմաստ։ Ճիշդ է, 1465-1471ի ինն ձեռագրերում Սմբատը յիշատակւում է իբրեւ թագաւոր, սակայն բացառութեամբ երկու դէպքի, մնացած եօթ դէպքերում նա յիշատակւում է միմիայն ժամանակագրական նշանակութեամբ, ինչպէս օրինակ՝ «գրեցաւ սա ի թվականիս Հայոց ի Զ եւ ի ԺԴ (1465), ի հայրապետութիւն տեառն Ստեփանոսի եւ ի Սմբատայ թագաւորին»[35] կամ «[Աւարտեցաւ]... (1466) ի հայրապետութեան տեառն տէր Ստեփանոսի եւ պարոն Սմբատայ, ի թագաւորութիւնս հայոց»,[36] եւն.։ Մնացած երկու դէպքերից մէկում նորընծայ թագաւորը հանդէս է գալիս որպէս ձեռագրի պատուիրատու, իսկ միւսում՝ վաճառող։ Եւ վերջ։ Ուրիշ ի՞նչ գործունէութիւն է ունեցել այս «հայոց թագաւոր Սմբատը»՝ անյայտ է, յիշատակարաններն այդ մասին լռում են։

Ո՞րն է 1465ի Աղթամարի ակտի իրական դրդապատճառը։ Մի թէ իրո՞ք Զաքարիա եւ Ստեփանոս կաթողիկոսներն անկեղծօրէն հաւատում էին, թէ Սմբատի թագաւորութեամբ վերականգնուելու էր հայոց պետականութիւնը եւ կամ ինչպէս ենթադրում է Ակինեանը, դա հետապնդում էր Աղթամարի աթոռը կաթողիկոսական միւս աթոռներից գերագահ ներկայացնելու հեռու գնացող եկեղեցական ու քաղաքական նպատակներ։ Ինչպէս արդէն նշել ենք, հենց այդ ժամանակ է, որ Էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջը լարուած պայքար էր ընթանում եկեղեցական ու աշխարհիկ աւատատէրերի երկու ուժեղ խմբակցութիւնների միջեւ։ Առաջինի մէջ էին միաւորուել Արարատի ու Սիւնիքի մեծատունները, իսկ երկրորդի՝ Վասպուրականի։ Անշուշտ, պատահական պէտք չէ համարել, որ հենց այս պահին, Սմբատի թագաւոր հռչակուելուց քիչ առաջ, Սեֆեդինեանները սկսեցին յիշել իրենց պանծալի արքայածնութիւնը եւ յիշատակագիրները մէկը միւսի ետեւից սկսեցին շեշտել Աղթամարի կաթողիկոսների «յազգէն եւ ի ցեղէն Գագկայ» սերուելը։ Կասկած չկայ, որ այդ յիշատակագիրները քաղաքական պատուէր էին կատարում, որ նրանց յանձնարարուած էր նախապէս։

Թագաւորի ծծման արարողութիւն (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր համար 5702, էջ 212բ)։

Տեսական ու գաղափարական հող էր նախապատրաստւում նախ ընդհանրական կաթողիկոսական գահը գրաւելու եւ ապա էջմիածնի ու Աղթամարի կաթողիկոսական զոյգ աթոռները վերամիաւորելու ուղղութեամբ։ Ահա թէ ինչու էր անհրաժեշտ Սմբատի խաղաքարտը։ Աղթամարը միանգամից առանձնանում էր բոլորից. նա միանգամից յայտնւում է ամենայն ուշադրութեան կենտրոնում, քանզի հայոց նորընծայ թագաւորի նստավայրն էր։

Բոլոր դէպքերում, որքան էլ Սմբատի թագաւորութիւնը համահայկական բովանդակութիւն չունէր եւ չէր էլ կարող ունենալ, որքան էլ այն հետապնդում էր ինչ-ինչ եկեղեցական ու քաղաքական նպատակներ, անտեղի են որոշ ուսումնասիրողների ուղղակի յիշաչար, անգամ թշնամական վերաբերմունքը Զաքարիա կաթո-

ղիկոսի այս գաղափարի ու Սմբատ Թագաւորի անձի նկատմամբ։ Դեռեւս Ակինեանն էր, որ Սմբատին անուանում էր «խաղալիք Թագաւոր»[37], Յովհաննիսեանը՝ «դիւանագիտական խրտուիլակ»[38] Խաչիկեանը՝ «քաղաքական խրտուիլակ»[39], «բարեմասնութիւններից զուրկ մի անձնաւորութիւն»[40], Կիրակոսեանը՝ «օրապակաս Թագաւոր»[41] եւլն. եւլն.։ Յատկապէս տարակուսելի է Խաչիկեանի պնդումը՝ Սմբատի իբր, «բարեմասնութիւններից զուրկ մի անձնաւորութիւն» լինելու, վերաբերեալ։ Որտեղի՞ց է գալիս նման պնդումը, մնում է անյայտ։ Չէ՞ որ Սմբատի մասին բոլոր յիշատակարանները նման պնդման հիմք չեն տալիս։ Եւ երկրորդ՝ ուսումնասիրողներից շատերը ծաղրելով Սմբատի «օրապակաս Թագաւորութիւնը», գրում են, թէ այն դուրս չեկաւ Աղթամարի սահմաններից եւ գոյատեւելով մէկ-երկու տարի՝ մինչեւ Ջհանշահի մահը (1467), ընդմիշտ մոռացուեց։ Նման տեսակէտերը, մեղմ ասած, թիւրիմացութիւն են։ Նախ Սմբատին որպէս հայոց Թագաւոր յիշատակում են ոչ միայն Աղթամարի յիշատակագիրները, այլեւ բաւականին հեռու գտնուող գրիչները։ Օրինակ՝ Մոկաց գաւառի Բռնաշէն գիւղում գրիչ Մխիթարը եւ նոյն գաւառի Փասավանք գիւղում գրիչ Իսրայէլը 1466ին յիշատակում են հայոց Թագաւոր Սմբատին[42] փաստ, որ ինքնին շատ յատկանշական է ու կարեւոր։ Երկրորդ՝ Սմբատի թէկուզ եւ ձեւական Թագաւորութիւնը Ջհանշահի մահով վերջ չգտաւ, ինչպէս պնդում է Յովհաննիսեանը[43] եւ նրան երկրորդելով՝ Վարդանեանը[44]։ Յիշատակարաններից մէկում, որը վերաբերում է 1471ին (գրիչ Ներսէս եպիսկոպոս), նշւում է, որ այն գրուել է «... ի հայրապետութեան սորին տեառն Ստեփանոսի, եւ ի նոր Թագաւորիս մեր պարոն Սմբատի»[45]։ Սա յստակօրէն փաստում է այն իրողութիւնը, որ Սմբատի Թագաւորութիւնը գոյատեւել է մինչեւ 1471 եւ ոչ թէ 1467։ Ելնելով այն իրողութիւնից, որ նոյն 1471ին Աղթամարում գրուած Մաշտոցի յիշատակարանում գրիչ Հայրապետը, որն ի դէպ Սմբատ Սեֆեդինեանի զարմիկն էր (մօրաքրոջ որդին), ժամանակը նշելիս յիշատակում է միայն «ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի» եւ լռութեան մատնում Թագաւորի անունը, մեզ ենթադրել է տալիս, որ հենց այդ թուականին էլ Սմբատը մահացել է եւ կամ զրկուել գահից[46]։ Եւ վերջապէս երրորդ՝ Սմբատ Սեֆեդինեանի անունը անմիջապէս չմոռացուեց, ինչպէս գտնում են ոմանք։ Նրա յիշատակը դեռեւս շատ երկար պահպանւում էր Վասպուրականում։ Ապացոյց կարող է ծառայել Ակինեանի կողմից շրջանառութեան դրուած մի յիշատակարան, որը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրութիւնից։ Գրիչ Մարգարէ

Արճիշեցին 1543ին գրած Սաղմոսարանում խօսելով բանաստեղծ, Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Ա. Աղթամարցու մասին, նշում է, որ սոյն գիրքը յիշատակ է Գրիգորիսի ծնողներին, «եւ հաւուն (այսինքն՝ պապին – Ա. Ու.) իւրոյ Սմբատ Թագաւորին»[47]։

Այսպիսով, Սմբատ Սեֆեդինեանը մի կարճ պահ ժամանակակիցներին յիշեցրեց Վասպուրականի, ինչու չէ նաեւ բովանդակ Հայաստանի, անցեալի փառքերը։ Եւ որքան էլ քիչ իրական էին Աղթամարի կաթողիկոսների երազները Թագաւորական գայիսոնի մասին, այնուամենայնիւ դրանք եւս որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայ ազատագրական մտքի պատմութեան տեսակէտից եւ ցուցանիշ են այն բանի, որ հայկական պետականութեան վերականգնման գաղափարը երբեք չի լքուել Հայաստանում ու մոռացուել։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հ. Ղ. Մ. Ալիշան, կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւատչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 169։

[2] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 8։

[3] Նոյն, էջ 412։

[4] Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, սիւնակ 428։

[5] Այդ աղբիւրներից նշելի են յատկապէս՝ Ե. Լալայեան, Հայ գրչագիրներ, գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 278. Նօտարք հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցւոյ, Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, 1888, էջ 208-209։

[6] Ա. Գ. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք 1, Երեւան, 1957, էջ 455-456։

[7] Փիրղալեմեան, էջ 209. հմմտ. Հ. Ներսէս վ. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920, էջ 87։

[8] Ակինեան, էջ 88։

[9] Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հատ. Բ., Կ. Պոլիս, 1914, սիւնակ 2094։

[10] Նոյն, սիւնակ 2112։

[11] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1958, էջ 172։

[12] Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Երեւան, 1990, էջ 331-332։ Ինքը՝ Դաւրիժեցին, սոյն յիշատակարանը քաղել է մի ձեռագիր Յայսմաւուրքից, որը գրուել էր «յամի թուականութեանս Հայոց ՉԺ (1461) ամին, յերկիրս Քաջբերունւոյ, ի քաղաքս Արճէշ» (Նոյն, էջ 331)։

[13] Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892, էջ 12։

[14] Փիրղալեմեան, էջ 196։

[15] Լալայեան, *Ցուցակ*, սիւնակ 436։ Ինքը՝ Զաքարիա կաթողիկոսը, դա բացատրում է հետեւեալ կերպ. «Փառշահն, [որ] տեսաւ աստ՝ երբ դու էնց լաւ մարդ ես՝ էջմիածին [եւ] աշն քեզ. մեջ էլ լանձ առաջ էջմիածնի սիրոյն հա[մար]», (Խաչիկեան, *ԺԶ. դարի ...*, մասն երկրորդ, էջ 173)։

[16] *ԺԶ. դարի...*, մասն երկրորդ, էջ 174։

[17] Դաւրիժեցի, էջ 333։

[18] Խ. Գ. Լեւոնեան, «Աղթամարայ կաթողիկոսները. սկիզբէն ցվերջ», *Բիւզանդիոն*, օրաթերթ, Կ. Պոլիս, 1900, 8 Սեպտեմբերի, No. 1195, էջ 1։

[19] Օրմանեան, սիւնակ 2163։

[20] Խաչիկեան, *ԺԶ դարի...*, մասն երկրորդ, էջ 175։

[21] Դաւրիժեցի, էջ 333։

[22] Փիրղալեմեան, էջ 216, 217, 219. հմմտ. Հ. Ղ. Մ. Ալիշան, *Այրարատ. Բնաշխարհիկ Հայաստանեայց*, Վենետիկ, 1890, էջ 198. *Բիւզանդիոն*, 1908, No. 3500 եւյն.։

[23] Այդ մասին մանրամասն տես՝ Ակինեան, *Գաւազանագիրք*, էջ 38-39։

[24] Փիրղալեմեան, էջ 208։

[25] Գ. վ. Սրուանձտեանց, *Թորոս աղբար*, մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 447։

[26] Դաւրիժեցի, էջ 331։

[27] Ակինեան, *Գաւազանագիրք*, էջ 108։

[28] Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հատ. Բ., Վենետիկ, 1924, էջ 419. հմմտ.՝ Խաչիկեան, *ԺԶ դարի...*, մասն երկրորդ, էջ 238-239։

[29] Սմբատ Սեֆեդինեանի մասին գոյութիւն ունեցող առանձին թռուցիկ ակնարկներից մանաւորապէս տես Տոպոնի, «Հայ թագաւոր մը ԺԶ. դարուն մէջ», *Իրաւունք*, հանդէս, Վառնա, 1911, No. 5. Հ. Ներսէս վ. Ակինեան, «Գրիգորիս Աղթամարցի», *Հանդէս ամսօրեայ*, Վիեննա, 1915, թիւ 1-12 (Յունուար- Դեկտեմբեր), սիւնակ 18-64. նոյնի, «Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, կեանքն ու քերթուածները», Վիեննա, 1958. նոյնի, *Գաւազանագիրք*, եւյն.։

[30] Փիրղալեմեան, էջ 220։ ԺԶ. դարի Անանուն ժամանակագիրը թէեւ յիշատակում է 1463ը («ՋԺԲ թուին Զաքարիա կաթողիկոս դեղեցին մեռաւ», տես՝ *Մանր ժամանակագրութիւններ*, 13-18րդ դդ., հատ. 1, կազմեց՝ Վ. Ա. Յակոբեանը, 1951, Երեւան, էջ 143), սակայն անտարակոյս է, որ դէպքը տեղի է ունեցել 1464ին։

[31] *Բիւզանդիոն*, 1900, No. 1196։

[32] Ակինեան, *Գաւազանագիրք*, էջ 108։

[33] *Գրիգորիս Աղթամարցի, XVIդ., ուսումնասիրութիւն, քննական բնագրեր եւ ծանօթագրութիւններ Մայիս Աւդալբեգեանի*, Երեւան, 1963, էջ 16։

[34] Լալայեանց, *Ցուցակ*, սիւնակ 428, հմմտ.՝ սիւնակ 504։

[35] Խաչիկեան, *ԺԶ. դարի...*, մասն երկրորդ, էջ 237։

[36] Նոյն, էջ 249։

[37] Ակինեան, *Գաւազանագիրք*, էջ 87։

[38] Յովհաննիսեան, *Դրուագներ*, հ.1, էջ 450։

[39] Խաչիկեան, *ԺԶ. դարի ...*, մասն երկրորդ, էջ 573։

[40] Լ. Ս. Խաչիկեան, «Հայաստանի քաղաքական վիճակը եւ սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները XIV-XV դարերում», Հայ ժողովրդի պատմութիւն, հատ. 4, Երեւան, 1972, էջ 44։

[41] Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկթամուրի եւ Թուրքմէն ցեղերի արշաւանքների շրջանում, Երեւան, 1997, էջ 332։

[42] Խաչիկեան, ԺԵ. դարի..., մասն երկրորդ, էջ 249-250։

[43] Յովհաննիսեան, Դրուագներ, հ. 1, էջ 450։

[44] Վ. Մ. Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը 908-1021 թթ., Երեւան, 1969, էջ 258. հմմտ.՝ նոյնի «Մեֆեդինեաններ» բառարանը Հայկական Սովետական Հանրագիտարանում (հատ. 10, Երեւան, 1984, էջ 349)։

[45] Խաչիկեան, ԺԵ. դարի..., մասն երկրորդ, էջ 309։

[46] Նոյն, էջ 312։

[47] Ակինեան, «Գրիգորիս Աղթամարցի», սիւնակ 33։

AN ATTEMPT TO REINSTATE ARMENIAN STATEHOOD IN THE MID-FIFTEENTH CENTURY
(Summary)

AGHAVNI UTUDJIAN

After the collapse of the Cilician Armenian Kingdom in 1375, the Armenian Church remained the sloe major institution with relatively secure administrative authority in the country. In addition to this, many representatives of the Armenian noble families had become clergymen to safeguard their family fortunes.

This empowered the Armenian Church to become the foremost player in the Armenian effort to reinstate the Armenian Kingdom.

The Aghtamar Catholicos, Zakaria III (1434-1464), became the driving force among the Armenian Church leaders who tried to put into effect this far-reaching plan.

His political shrewdness led him to cooperate with the Kara Koyunlu leader, JihanShah (1437-1467). The latter supported Zakaria III in his attempt to attain the Catholicossate of Ejmiatzin in 1460.

On the other hand, Zakaria could not realize his next plan of unifying the Catholicossates of Ejmiatzin, Aghtamar and Sis. Against unsurmountable, pressures he was forced to leave Ejmiatzin in disguise in 1461. Yet, in 1464 he was back in Ejmiatzin, only to die when poisoned that same year.

Nevertheless, Catholicos Zakaria III's plan of reinstating the Armenian kingship materialized, even though he couldn't see its realization.

In early 1465, in the church of the Holy Cross, on the island of Aghtamar, Catholicos Stepanos IV (1464-1489) anointed Smbat Sefedinian as king of the Armenians.

Reinstating the Armenian kingship did not mean reinstating Armenian statehood; however, it can be considered as a step in that direction and a reflection of the Armenian nation's desire to reestablish its statehood.